

ՆՈՐՈՐ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՅԻԷ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ
ՊԵՏԲ Ե ՌԵՂՂԵՆ ԱՌ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լուսարի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռագիրներն ետ չեն դարձուիր,
ԱՐՏՕՆԱՏԷՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

Լ Ր Ա Գ Ի Ր
ԱԶ Գ Ա Յ Ի Ն, ԲԱՆ Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն ՈՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Table with subscription rates for different regions and durations.

ԶՈՐԵՔՇԱՐԹԻ 18/31 ՆՈՎԱԿՏԵՄԲԵՐ

ՔԱՍՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 42

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏՄԱՌՈՅ ՕԳՈՍՏՈՍԻ 11ԷՆ
ՍԿՍԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒ-
ՑԻՉ ՏԻՄԱ ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ ԱՅՍ ՕՐ-
ՈՒԱՆԷ ՍԿՍԵԱՆ ԴԱՌԱՐԱՆ Է «ՆՈՐ
ՕՐ»Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԷՆ:

* *

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՈՒԹԱՅ ՅԱՅ-
ՏԱՐԱՐԵԼ ԹԷ «ՆՈՐ ՕՐ»Ի ԽՄԲԱԳՐԱ-
ՊԵՏ ՏԻՄԱ ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ ԱՅՍ ՕՐ-
ՈՒԱՆԷ ՍԿՍԵԱՆ ԴԱՌԱՐԱՆ Է «ՆՈՐ
ՕՐ»Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԷՆ:

22 ՍԵՊՏ. 900

* *

«Նոր Օր»ի վարչութիւնը կը խնդրէ
Արտասահմանի ու կողմասի արգոյ
բաժանորդներէն որ հաճին պահանջ-
ընել երկուողով մը «Նոր Օր»ի պակաս
ստացուած թիւերը, որոնք պիտի
զրկուին անմիջապէս:

Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր»
ստացող բոլոր կողմասի հայ թեր-
թերու ու հանդէսներու Պատ. խմբ-
բազմութիւններէն որ իրենց հրատարակու-
թիւնները փոխանակեն «Նոր Օր»ի
հետ:

ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

«Հինգ հազար գործաւորներ Մոն-
րէալ քաղաքին մէջ, խօսք մէկ ընե-
լով գործերնին թողած են ու չեն ու-
զեր աշխատել. խաղաղութիւնը չը
խանդարուելու համար կառավարու-
թիւնը 600ի չափ զօրք զրկած է հոն,
որոնցմէ եթէ վերաւորուած են. կա-
ցութիւնը խիստ ծանր է»:

Ահա՛ կարեոր հեռագիր մը զոր
Բիւթէի գործակալութիւնը շարաթ
օր մեզ կը հաղորդէր:

Արդեօք ինչ ըրին Ամերիկայի դրա-
մատէրները և կամ գործատէրները.
պիտի ընեն այն՝ ինչ որ ըրին իրենց
նախորդները: Առաջին անգամ չէ որ
հոն այս տեսակ գործադուլներ կը
պատահին. ո՛չ ապաքէն զեռ անցեալ
տարի, երեսուն հազար բանուորներ
Շիկագօյի մէջ ահազին գործադուլ

մը ըրին և մինչև որ իրենց պահանջ-
ընումներուն զոհացում չի տրուեցաւ,
շարաթներով չ'աշխատեցան:

Ալ կրնաք երեւակայել թէ աս տե-
սակ գործադուլի մը երեսն ինչ խո-
շոր փնաս կրնայ հասնել թէ՛ գործա-
տէրներուն և թէ՛ գործաւորներուն ալ:

Եթէ վերջին երեսուն տարուան
ընթացքին մէջ Ամերիկա տեղի ու-
նեցած գործադուլներուն թիւը համ-
բերեք, թերևս մի քանի տասը հա-
զարները անցնի. տարի եղած է որ
1500էն աւելի գործադուլ տեղի ունե-
ցած է Ամերիկայի զանազան քաղաք-
ներուն մէջ. վերջապէս գործադուլը
համաճարակ ախտի մը նման տա-
րածուած է ու երթալով աճելու վը-
րայ է:

Բնական է թէ գործադուլը մի-
միայն Ամերիկայի համար չէ. Ֆրան-
սան ևս այս մասին Ամերիկայէն վար
չի մնար. զեռ նոր այս տարի Ապ-
րիլ և Մայիս ամիսներուն մէջ հե-
ռագիր հեռագրի վրայ եկաւ թէ փա-
րիզի մէջ որքան կառուպան, հանքե-
րու և նաւարանի (թէրսանէ) բան-
ուորներ, Մետաքրիի շոգենաներու
կառուցներ ու Ամերիկա և Աւստրա-
լիա ճամբորդող մեծ շոգենաներու
ծառաներ և մեքենագործներ կան՝
փարիզի աշխարհային ցուցահանդէսի
առիթէն օգտուելով՝ ամենքը խօսք
մէկ ըրած՝ գործերնին թողուցած են.
ոմանք ժամերով, ոմանք օրերով և
ոմանք ալ շարաթներով գործի վե-
րադարձած չեն, մինչև որ իրենց պա-
հանջընումներուն զոհացում չէ տրուած:

Ալ երեւակայեցէք, նամանաւանդ
շոգենաւային ընկերութեանց գործա-
տէրները ո՞վ գիտէ որքան շուարած
կեցած են իրաց այդ յանկարծակի
վիճակին հանդէպ. վերջը վերջն ալ
հարկադրուած են այդ գործաւորնե-
րուն և նամանաւանդ կառուցներուն
զոհացում տալու, առանց որոց Լոր-
տերը և Լորտուհիները առաջնորդող
շոգենաւը չի կրնար ճամբորդել:

Այո՛, Եգիպտոսի դրամատէրները
և գործատէրները յանապիս երջանիկ
համարելու են ինքզինքնին, որ այս-
պիսի տարօրինակ գործադուլներու
սպառնալիքին ենթակայ ըլլալէ ընդ-
հանրապէս հեռի են:

ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Մնացեալ տարի 1899ի սկիզբը Գա-
հիրէի թրամվէյին զծին պաշտօնեա-
ները աշխատութեան չափազանցու-
թեանէն զգոհ, խօսք մէկ ընելով պահ-
մը գործադուլ ըրին. անմիջապէս կա-
ռավարութեան և թրամվէյի ընկե-
րութեան միջև կատարուած խորհրդ-
րակցութիւններ, գործադուլին առաջ-
քը առին որ հալու երկու ժամ տեսց:

Աւելի նշանակելի գործադուլ մը
եթէ տեղի ունեցաւ Եգիպտոսի մէջ,
այն ալ ծխախոտի գործարաններու
սկիզբէն գործադուլը եղաւ, որ ամիսի մը չափ տեսց, ու վերջը
ան ալ կարգադրուեցաւ. բոցառու-
թիւն ըլլալով Մաթոսեան վաճա-
ռատան գործաւորները սոյն գործա-
դուլին մասնակից չեղան, թէպէտ
միւս գործարաններու գործաւորները
ասոնց սպառնալիքներ ըրած էին,
բայց ասոնք ուէ զգոհութիւն չ'ու-
նենալուն համար մերժեցին:

Եգիպտոսի և ասոր նման փոքր
երկիրներու մէջ եթէ այսպիսի ծանր
գործադուլներ չ'են պատահիր, պատ-
ճառը կայ որ պարզ է:

Նայի Եգիպտոսի մէջ, Ամերիկայի
կամ Ֆրանսայի նման մեծահարուստ
դրամատէրներ կամ գործատէրներ չի
կան որոնք մեծամեծ և հսկայ ձեռ-
նարկներու կարենան դիմել. այսօր
բովանդակ Եգիպտոսի մէջ եթէ կան
աչքի զարնող ձեռնարկներ անոնք ալ
Գահիրէի երկրորդական թրամվէյի
ընկերութիւնը որ երկու տարիէ ի վեր
հաստատուեցաւ, Սուարըս եղբարց
հէլվանի երկաթուղիները, և Նահա-
համատիի մէջ ասոնց ունեցած շա-
քարի գործարանը, Մաթոսեաններու
և Չանսգլըի ծխախոտի գործարան-
ները որոնց իւրաքանչիւրին մէջ հա-
զարականէն աւելի գործաւոր չի բա-
նիր. կրնաք եղբարցանել թէ այս-
քան սահմանափակ ձեռնարկներու
ժողքն ծնած գործադուլ մը ինչ աս-
տիճան կարեւորութիւն կրնայ ու-
նենալ, բնական է թէ փնասը միշտ
փնաս է, բայց միւս երկիրներու հա-
մեմատաբար միշտ աննշան է. Երկ-
րորդ պատճառը, Եգիպտոսի ճ միլի-
ոն բնակչութեան հազիւ ութը հա-
րիւր հազարը քրիստոնեայ երոպա-

ցի, մնացեալը ֆէլլահ և խալի է.
եթէ գործադուլ մը տեղի ունենայ,
ֆէլլահը կամ խալին մասնակից չըլ-
լար. անիկա իր առած երկու երեք
զրը. օրուկանէն միշտ զոհ է. եթէ
գործադուլի մասնակից եղողներ զտ-
նուին իսկ, թերևս ոպառնալիքի և
ճնշման տակ ընդունուած ըլլան. բնա-
կան է թէ գործադուլը ընդհանրապէս
արուեստաւոր և պաշտօնեայ դասա-
կարգին միջև կը ծնի:

Գործադուլը որ այնքան աւերում
գործած է ու կը գործէ աշխարհի
ամէն մէկ անկիւնը, նա որ գործա-
ւորին խրտուիլակը եղած է դրամա-
տէրին և կամ գործատէրին դէմ, տես-
նենք ինչ պատճառներով ծագում
կ'առնէ.

(Շարունակելի)

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

ԳԵՐ. ԱՅՎԱԶԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Կ. Պոլսոյ մեր թղթակցէն.
Եգիպտոսի Նորընտիր Առաջնորդ
Գեր. Այվազեան Եպիսկոպոսի պաշ-
տօնական թուղթերն յանձնուած ու
ամէն զժուարութիւնը հարգուած են.
Հետևաբար կը յուսացուի որ Ն. Սըր-
բազնութիւնը Նոյեմբերի սկիզբները
կրնայ մեկնիլ գէպի Եգիպտոս, իւր
պաշտօնատեղին:

ՊՈԼՍՈՅ ԹԵՐԹԵՐԷՆ

—Նպաստից Յաճախորդովոյ որոշ-
մամբ բաւականաչափ դասագիրք զըն-
ուած ըլլալով, շարթուս մէջ կ'զրկու-
ին որոշուած որբանոցներուն նպաստ-
ընկալ վարժարանները:

—Քահանաներու ամսական կապե-
լու գործն յառաջ կը տաքուի Ռու-
սահայերու մէջ: Ս. Հայրապետը ար-
դէն հաւանած է այս որոշման, ու
տեղ տեղ կը գործադրուի ալ:

—Մոսկուայի երգուեալ հաստար-
մատարներու ու իրենց օգնականներու
միջև ժողով կը գումարուի հանգուց-
եալ Գր. Ջանչեանցի անունով ժողո-
վրդական դրագարան հիմնելու հա-
մար:

—Նոյնպէս Թիֆլիսէն կը գրեն թէ
Աստուածաշունչի տպագրութիւնը կա-
նոնաւոր կերպով առաջ տանելու հա-
մար Ն. Ս. Օժուրը Ս. Էջմիածին հը-

րաւերը և ծանօթ բանասէր Նորայր Բզանզագին, գլխաւորաբար նորատիպ Աստուածաշունչին փորձերու սրբագրութեան հսկելու պաշտօնով:

ՆՇԱՆԱՍՈՍՈՒԹԻՒՆ

Ինչպէս ծանուցած էինք նախորդ թիւով, Կիրակի օրը. 28 Հոկտ. տեղի ունեցաւ նշանախօսութիւնն Օրդ. Նոյեմի Շէրիտեանի, զուտար Ազն. Կ. պէյ Շէրիտեանի, ընդ Տ. Տ. ժամկոչեանի, ի ներկայութիւն Վսեմ Տիարաց Ազիզ պէյ Երուսուֆ, Գրիգոր Գանչեւէր, Պետրոս Կարապետեան, Տօրթ. Մախոսեան ևն., ևն.: Մեր անկեղծ խնդակցութիւնը:

ՔԱՂԱՔԱՎԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՆՍՎԱԼ

Մ'մէկ կողմէն հաստատութիւն գտնելու վրայ է այն զբոյժը թէ՛ Զուիցերիոյ Կառավարութիւնը տրամադիր է՝ թուանալալի և Օռէն-ժի այդ նահատակ ազգերուն համար կարելի եղածին չափ վերջին իրաւունք մը ձեռք ձգել: Միայն թէ Զուիցերիոյ Կառավարութիւնը ուղղակի չը պիտի միջամտէ, սպասելով որ օտար տէրութեան մը կողմէ իրեն առաջարկուի:

ՉԻՆԱՍՏԱՆ

Շանկհայէ «Տէյլի Թէլէկրաֆ»ին կը հեռագրեն թէ Թէսսալո, Գուանկ-Թուանկի նահանգի փոխարքան, իր ունեցած ամեն թանկագին բաները հանդերձ ընտանեօք գաղտնի զրկած է ի Հոնկ-Գոնկ, վախճալով որ Գանդոնը օտար տէրութեանց ձեռք չ'անցնի:

Ուրիշ հեռագիր մ'ալ կ'իմացնէ թէ՛ «Թրիատ» հայրենասիրական ընկերութեանց պատկանող ապստամբները բոլորովին կոտորեր են կառավարութեան զօրքերը անցեալ երեքշաբթի Հուլի-Չաու ի մէջ, և կը պատրաստու-

ին Քանթոնի վրայ բաւելու: Չինաստանի զօրաց կը հրամանատարէր Սե Գրոշակներու նախկին պետը՝ Լիունկ-Թունկ-Յու:

Շանկհայի թղթատան Տնօրէն Չէնկի ստացած հեռագիրներուն համեմատ թրիտները՝ որոնք հայրենասիրական խումբի պատկանող չինացիներ են, յաղթած են չինական կառավարութեան զօրքերուն: Չինացի հրամանատարները օգնութիւն կը պահանջեն ապստամբները զսպելու համար:

Նմանապէս Քիանկ-Սուի կողմերն ալ խոտովութիւնները պակաս չեն. շարժումը Չինաստանի մէջ երթալով տարածուելու վրայ է. նոյնիսկ չինացիներն իրենք իրենց մէջ զերար կուտեն. ատոնք հերձուածողներ են որոնք Չինաստանի քաղաքները իրենց մէջ բաժնել կուզեն. չեն գիտեր որ օտարին ապագայ կարկանդակն է անի:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Վաղը, նոյ. 1, Ն. Բ. Խտիվը, առաւօտեան ժամը 7 ու կէսին Աղեքսանդրիայէն Գահիրէ պիտի վերադառնայ:

—Նախարարաց խորհուրդը իւր յառաջիկայ նստին մէջ պիտի քննէ Նեղոսի և Զրանցքներու եզերքը հաստատուած շրամբարձ մեքենաներու օրէնքին ծրագիրը:

—Զրոյց կայ թէ Ն. Բ. Խտիվը այս ձմեռ Սուտան պիտի ճամբորդէ: սակայն մեր առած տեղեկութիւններու նայելով, այս ճամբորդութեան խնդիրը սկզբունքով անգամ վճռուած չէ. բայց, հաւանական է որ Լորտ Գրոմըր այս ձմեռ մինչև Խարթում երթայ:

—Ն. Գ. Մ'կր. Յոթիոս, Յունաց պատրիարքը, Գահիրէ պիտի վերադառնայ առաջիկայ ամսոյ 12ին:

մէն էնաֆին ետ ճէպը, ետ ձեռքը «Նոր-Օր» պետք է գտնուի. վէհասարը փիացային վրայ «Նոր-Օր» կ'ըսեն ու կ'երթան, անխըտար թի ոտանաւոր պիլէ շիներ են:

Հազար վայ անոր Որ չի կարգար «Նոր-Օր»:

Պ. — Աղբար, հացի պէս բան մը չ'ըսե՞ս: Ս. — Հացէն ալ աւելի. չորեքշաբթի և շաբաթ օրերը ժամը 4ը մէկ տազա անցաւ մի, մաթպանին առջև ինճաղընճ բազմութիւնը կը ընցուի, ամենքն ալ «Նոր-Օր»ին կը սպասեն: Թամամ, այսօր չորեքշաբթի է պապա, եթէ կուզես աչքով տեսնել քեզի թարֆ տամ տեղը, գնայ. ժամը 3ն է հիմակ, ժամ մը վերջը «Նոր-Օր»ն ալ կ'ելլայ, հազար հոն էֆէնտիկն եղբայրն ալ տեսած կ'ըլլաս, ու գործը կը պատմես:

Պ. — Իշթէ աս աղէկ, անանկ է նէ թարֆ տուր երթամ:

Ս. — Ասկէ տօղրի կ'երթաս, Ապտին Սալամ փաշային Սէրպը, ետխօտ «Նոր-Օր»ին մաթպանն որի որ հարցնես քեզի կը ցուցնեն:

—Սուլթանի քեռայր՝ Տամատ Մահմուտ փաշա՝ անցեալ ուրբաթ օր այցելութիւն տուած է Լորտ Գրոմըրի: Այս տեսակցութիւնը ունէ պաշտօնական հանդամանը չունէր:

Մահմուտ փաշան շաբաթ օրն ալ իր երկու զաւակներով այցելած է Սէյիտնէ-էլ-Հիւսէյնի գերեզմանը:

—Եւրոպացի մը, անցեալ շաբաթ օրը, Աղեքսանդրիոյ մէջ անձնասպան եղած է՝ ինքզինք պատուհանէն վար նետելով. ծանրապէս վիրաւոր վիճակի մը մէջ հիւանդանոց կը փոխադրուի ուր քանի մը վայրկեան յետոյ կը մեռնի: Դժբաղդը անձնասպան եղած է անդարմանելի հիւանդութեան մը պատճառաւ, որ տարիներէ ի վեր զինք կը տառապեցնէր:

—Նոյն քաղաքին մէջ երկու հըրզեհներ պատահեր են. մին Մուհամմէտ Շարափ փառն մէջ, իսկ միւսը տեղական տան մը. փուռը, որ կը զտնուէր հին մաքսատան թաղը, բարրովին հրոյ ճարակ եղած է. բայց տանը ֆրանսերը ծանր չեն:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնտոն, 26 Հոկտ.

Խաւիա իւր հաւանութիւնը տուած է Անկլո-Գերմանական պայմանագրութեան համար:

Լա Հէյ, 26 Հոկտ.

Պատերազմէն առաջ Հոլանտայի ու Պ. Գրուկէրի միջև եղած թղթակցութիւնը հրատարակուեցաւ: Յիշեալ թղթակցութիւնը կը ցուցնէ թէ Հոլանտան կը սատարէր Գերմանիոյ տեսութեանց և խորհուրդ կուտար թրանսվալի որ ցոյց մը ընէ:

Լոնտոն, 28 Հոկտ.

Բէքինի դիւանագիտական մարմինը համաժողով մը գումարելով, հարկ տեսած է վերջին դէպքերու պատասխանատու գլխաւոր անձնաւորութեանց գլխաւորը յայտարարել: Միւտքէնի մէջ Ռուսերը տեսած են

որ տեղւոյն գլխաւոր շէնքերն ու մըթերանոցները խրամատուած են ու ելեքտրական թելերով իրարու միացուած զանոնք օդը հանելու համար: Յարձակումը շուտ կատարուելուն չը նորհիւ է միայն որ քաղաքն ու ռուս զօրքերը կրցեր են ազատիլ կատարեալ աւերուածէ մը: Ռուսերը ազատած են նաև կայսերական գերեզմաններն ու բոլոր հին գանձերը, որոնք բնականաբար անգին են:

Ճիւ-Երթը 28 Հոկտ.

Պ. Պրայեան երէկ իրիկուն հոս այցելութիւն մը տուաւ և հինգ տարբեր միջոցներու բանախօսեց. ներկայ էին 30,000 մարդիկ: 150,000է ալ աւելի մարդ կար մերձակայ փողոցներուն մէջ:

Դ Է Ս Ո Ւ Դ Է Ն

ՎԵՀԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՄԱԿԻՏՈՒԹԻՒՆՔ

Ատորիոյ Ֆրանսուա — Ժօզէֆ կայսրը 11 տարի ալ պիտի ապրի գեռ: Իր «Հրաժարիմք»ը պիտի կարգայ ճիշդ 1911 փետր. 24ին, 81 տարեկան:

Պէճիբայի Լէոբլոտ թագաւորն ալ եօթը տարիէն, այսինքն 1907 մարտ 3ին պիտի մեռնի:

1885ին, Պ. Մակոն աը կրանսէլվ իր «Ժամագիտութիւն քսան և չորս վերապետներու»ին մէջ, հետեւեալ կերպով կը յայտարարէր իտալիոյ Ումպէրթօ թագաւորին մահը.

«1900ին է որ յիսուն և վեց տարեկան՝ պիտի դադրի ապրելէ. և այդ ճակատագրական թուականը կը գրտնուի մայիս 20էն յուլիս 20ի միջև»:

Խաւիայ վեհապետը սպաննուեցաւ 1900 յունիս 29ին: Յարգելի Պ. տը կրանսէլվի կանխասացութիւնը կատարուեցաւ: Ինչպէ՞ ուրեմն, իր միւս կանխասացութիւնները չպիտի կատարուին:

ընէ. կ'ազաչեմ ձեր զազկոյնի մէջ անցընէք:

Թ. — Պապա, աս մեր զազկոյն չէ, ազգինն է, մենք հոս անձնութեամբ կ'աշխատինք կոր:

Պ. — Էֆէնտին ի՞նչ կ'ընէ:

Թ. — Էֆէնտին վարչութեան ներկայացուցիչն է. եթէ անոր խօսելը բան մը ունիս, գրաւոր ներկայացուր. անունը, գործը, ամէն բան գրէ մէջը:

Պ. — Ըսել է օրուտ կ'ընէ:

Թ. — Եթէ ատ մարդուն ըրած գէշութիւնը ազգին կը դպի, մէտա եթէ ատ մարդը մատնչութիւն ըրեր է իր մէմբէթի թիւ մէջ, ետխօտ քեզի պէս քանի մը ֆամիլեաներ փճացուցեր է նէ, զիմակը վար կ'անէ. աստղի Զէյնուցի եղբորին խնդիրը չիմացար, իշթէ անոր կը զարձնէ:

Ամա շախի խնդիրներուն մէջ չի խառնուիր, շատ լուրջ է:

Պ. — (Խնդումով մը «կեցիք բարով» կ'ըսէ ու կը վազէ Ս...ին քով, Թ...ին խօսքերը գրաւոր երթալուն կ'ըսէ հասկցած, կ'ըսէ չի հասկցած):

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ ՓԱՍՏԱՐԱՆԻՆ ԴԵՄ

(Շար. Սախորդ Թիւէժ)

Պ. — Աֆէրիմ, ատ ի՞նչ տղէկ զազկոյն է եղեր, նայէ, էհալիին ֆայտէն ինտոր կը մտածէ կոր (այս միջոցին գրպանէն գործածուած տետրակ մը հանելով բան մը նըշանակեց մատիտով, կարելի է «Նոր-Օր»ին անունը գրեց):

Ս. — Ատոր ըսելիք չի կայ, պապա. հաթթա կ'արիէ որ «Նոր-Օր»ին անունը զուն ալ սովորիս: Թէվէքէլի չէ, ուր որ կ'երթամ ամէնուն ձեռքը «Նոր-Օր» կը տեսնամ: Մըրըրին մէջ մարդ չի կայ որ «Նոր-Օր» չի կարդայ. մանաւանդ, տօղթօն, էզաճի, ֆայրիքաթօն, հիւրիմէթի պաշտօնեայ, խոյուճի, գրագիր, խանութպան ա-

Կ. ՊՈԼՍՈՅ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՔԻՈՅ ՊԱՇՏՕՆԵՒՅ ԱՄՍԱԿԱՆ ՆԵՐԸ

Թուրք կառավարութեան պաշտօնեայները գրեթէ մէկ տարի է ի վեր ամսական առած չեն. նմանապէս Սուլթանի անձնական գանձու պայտինքն խաղինէի խասայի պաշտօնեայները միևնոյն գիրքի մէջ կը գտնուին: Վրաստան. Յովհաննէս էֆ. Սագըլ՝ որ Սուլթանի անձնական գանձուն նախարարն է՝ հրատարած է, առարկելով որ այլ ևս իրեն համար անկարելի է պաշտօն վարել տեղ մը որուն պաշտօնեայները տարի մը ամբողջ իրենց ամսականներէն կը զրկուին. արդէն Յովհաննէս էֆ. առաջի օրէն ի վեր իբր խղճամիտ մէկը ճանչցուած է, այս կերպով տրուած հրատարական մը Սուլթանին մեծ հարուած մըն է:

ՄԱՀՄՈՒՏ ԸԷԼԱԼԷՏՏԻՆ ՓԱՇՏՕՅ

Ինչպէս արդէն առաջուց ծանուցուած էր, Մահմուտ ձէլայէտտին փաշայ՝ Սուլթանի կողմէն յատկապէս եւրոպա զրկուած էր: այն տեղի փախստական գտնուող ժէճն-թուրքերը համոզելու համար որ Պոլիս վերադառնան և իրենց մեծամեծ խոստումներ եղեր է:

Այս տեսակ պաշտօն մը ասկէ մի քանի տարի առաջ ևս յանձնուած էր Տատեան Տիրան պէյի, որդի Տատեան Արթին փաշայի, որ անյաշող իւր տեղը վերադարձած էր:

Այս անգամ Մահմուտ ձէլայէտտին փաշայ եւրոպայէն վերադարձին, միս մինակ եղած ըլլալուն և ու է գործ մը յաջողուցած չըլլալուն համար, Սուլթանին աչքէն ինկեր է և մինչև անգամ չնորհազուրկ եղեր է:

Սուլթանը բարկանալով՝ իրեն ըսեր է թէ՝ «գոնէ մէկ թուրք մը և կամ քրիստոնեայ մըն ալ չի կրցար ետ դարձնել»:

Ասոր վրայ Մահմուտ ձէլայէտտին փաշայ պատասխաներ է թէ՝ «ինչպէս կրնան հաւատարմութիւն ընծայել իմ առաջարկներուս, քանի որ քանիքանի անձնաւորութիւններ Ձեր Վեհափա-

ռութեան խոստումներէն չլացած վերադարձան Պոլիս ու փոխանակ պաշտօնի կոչուելու, մէկ երկու օրուան միջոցին ոմանք անյայտ եղան ոմանք ալ արքայութեան»:

Ահմէտ ձէլայէտտին փաշայ իբր թէ սրտին յուզմունքէն այլ ևս չուզելով Պոլիս կենալ, որոշած է եղեր հոնկէ մեկնել, որպէսզի Տէրութեան մտաւրաւ կործանումն ալ իր աչքովը տեսած չըլլայ:

Շատ լաւ ինչու համար Սուլթանը թուրքի մէջ գտնուող ժէճն-թուրքերուն խոստում չի տար, ու օտար երկիրներու մէջ փախստականներուն հազարլու մէկ խոստում կուտայ. պատասխանը պարզ է. որովհետև թուրքի գտնուողները իր ձեռքին մէջ են, կուզէ կ'աքորէ կուզէ ծովին մէջը կը խեղդէ, ինքն է միակ հրամանատար:

Գալով օտար երկիրներուն՝ ան տեղիներուն վրաս մը չի կարենալ հասցնելուն համար, խոստանալով կը խափէ, ու անգամ մը վերադարձան մի, այլ ևս անոնք ալ առաջիններուն բաղդին կը մանակցին:

Պոլիս վերադարձող ժէճն-թուրքերը չեն կրնար կոր ըմբռնել:

ԳԱՂՏՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ

Անցեալ թիւով ծանուցած էինք թէ Պոլսոյ մէջ նորէն ձերբակալութիւնները սկսած են, և քաղաքը ահ ու գողի մէջ է:

Սուլթանի հրամանաւ վերջերս գաղտնի նոր օստիկանութիւն մը կազմուեր է, որուն մէջ գտնուողները քաղաքին և ոչ մէկուն ծանօթ են:

Ասոնք գիշեր ցերեկ կը ձերբակալեն թուրք և չայ՝ առանց խտրութեան. իրենց տրամադրութեանը տակ ունին շոգեմակոյղ մը. ցերեկը ձերբակալուող բոլոր չայերը և թուրքերը Ղալաթայի ծովեզրեայ պահականոցին բանտը կը նետուին, ու կէս գիշերը մտնելուն պէս, շոգեմակոյղը կ'առնէ ատոնք ու կը տանի Մարմարայի ծովը Եփեսոս գոյէի բացերը մէկիկ մէկիկ ծովը կը նետէ:

Այս վայրենական սովորութիւնը առաջ Վասիլոսին մէջ կըլլայ եղեր, բայց կերևի թէ Նուրի հոսանքը դիակներ-

ըր Իսկիւտարի և քովի եղերքները նետելուն համար, ետ կեցեր են ու հիմայ Մարմարայի մէջ ի գործ կը դնեն:

ՍՈՒԼԹԱՆԻ ՓՈՒՍԱՌՈՒԹԻՒՆԸ

Սուլթանը որուն անձնական գանձը առնուազն 40 միլիոն ոսկի ունի, անամթաքար փոխառութիւն ընել կուզէ Պանթ-Օթոմանէն:

Անցեալները Օսմանեան Պանթան ութը հարիւր հազար ոսկի տուեր է, հազիւ կառավարութեան պաշտօնեայներուն մէկ մէկ ամսական կրցեր է տրուել. հիմա նորէն դրամ չիկայ, պաշտօնեայններուն վիճակը յուսահատական է կըսուի:

ԹՈՒՐԻՔԻՍ

Կ. Պոլիս թերթերի մէջ տպուած է սուլթան Աբդուլ-Համիդի իւր գահակալութեան 25-ամեայ յորեղեանի առթիւ ստացած նուէրների հետեւեալ ցուցակը.

Յրանսայի հանրապետութեան նախագահը նուիրած է Գորըլէնսի ընտիր գորգ մը և Սէվրի յախճապակեայ մեծ անօթ մը:

Յարը՝ գրասենեակի ժամացոյց մը և իր կենդանագիրը: ժամացոյցը գըրուլս գործոցներէն մէկն է Պետերբուրգի հանրածանօթ գոհարավաճառ և ուսուսարժունիքին ակնագործ պ. Յաբեռֆէի: Այս ժամացոյցին առաջը կը գտնուի կործառիւծ մը, որ իր աջ թաթին մէջ բռնած է ոսկիէ մեծ դաշոյն մը:

Կործառիւծին ետևի երկու թաթերը գըրուած են պատուանդանի մը վրայ: Պատուանդանը և կործառիւծը միայն 40 սանտիմետր բարձրութեամբ զանգուած մը կը կազմեն, որ սիբերիական բաց կանանչ քարի մը մէջ քանդակուած է: Պատուանդանն ամբողջովին զարդարուած է աղամանդաներով: Ճակատին վրայ կը գտնուի աղամանդազարդ պղտիկ շրջանակ մը, որուն վրայ հռոմէական թուանշաններով գըրուած է վեհ. սուլթանին 25րդ տարեդարձը թուանշաններն աղաման-

դեն: Շրջանակին մէկ կողմը կը գըրուուի Յարին անուան սկզբնատուր ուսուսերէն գըրով, հռոմէական 11 թուանշանով, և վրան Ռուսիոյ կայսերական թագով, ամենքն ալ աղամանդէ: Իսկ միւս կողմը կայս. թուրքան, նոյնպէս աղամանդազարդ: ժամացոյցը, զոր կործառիւծն իր ձախ թաթին մէջ բռնած է, հին ժամանակի գրպանի ժամացոյցներուն մեծութիւնն ունի, և զարդարուած է սուտակներով, զրմէրուխտներով և աղամանդներով: Իրրուած է կաշնիէ տուփի մը մէջ: Իսկ Յարին կենդանագիրը, որ շրջանակաւոր է, ունի 30 սանտիմետր բարձրութիւն: Ասիկա Յարին ամենէն վերջին լուսանկարներէն մէկն է և մինչև ծոնգերը կը ներկայացնէ Ն. Վեհափառութիւնը: Կենդանագիրն վերին աջ կողմը կը տեսնուի ստորագրութիւնը՝ Ֆրանսերէն, 19 օգոստոս 1 սեպտեմբեր 1900 թուականով: Շրջանակն արծաթէ է, առանց ո և է զարդարանքի: Ճակատը կը գտնուի ուսուկայս. թագը, նմանապէս արծաթէ: Կենդանագիրը զետեղուած է կարմիր թաւիչէ պահարանի մը մէջ:

Վեհ. սուլթանին անդրանիկ դուստրը նուիրած է սուլթան Ահմէտի աղբիւրին արծաթէ մանրանկարը, որ ցուցադրուած է Չիքագոյի արուեստահանդէսին մէջ:

Սպարապետ Ռիզա փաշայ՝ ոսկիէ պատի ժամացոյց մը, աղամանդներով դըրուադուած, զոր չինած են մեծ շուկայի ակնագործները:

Խզիւին մայրը՝ աղամանդազարդ կաղամար մը, գրիչներ և գրելու պէտք եղած ուրիշ առարկաները:

Աբբաս փաշայ՝ Հայիմ փաշայի որդին, հին սանքսոնեան 3 անօթներ, իւրաքայիւրը 1 ու կէս մետր ծաւալով:

Գասթեմուշի քաղաքը՝ խիստ գեղեցիկ գորգ մը, պատրաստուած տեղւոյն արուեստից վարժարանի աշակերտներուն կողմէ:

Իզմիրի արուեստից վարժարանը ըսքանչիւրի գրադարան մը, որուն արուեստական ոճով չինուած արծաթէ գոնակները գաղտնի ճակատը կը ցուցնեն:

Ս. — Խէր է, պապա, ինչ տեսարանայինք, պատմէ:

Պ. — Աստուած քեզի երկար օրեր տայ օղորմ, գործս ընցած է:

Ս. — Գործը ձգէ տէ, սա իմ ըսածս ձեռք եղաւ, ըսէ նայինք:

Պ. Շիտակը ըսելիք չի կայ, բու պատմածէդ աւելի խաղապալըն մը քի, սուս օլ. «Նոր-Օր»-ը մաքնային տակէն ելնելուն կը պէքէկին կոր քի խափը խափը ընեն:

Ամա, անանկ կարդ կանոն կայ քի, մէկ կը հատտ ունի նիզամըդ բան մը ընէ. մաթպատին մէկ եանը մեծկակ օտա մը կայ, «Նոր-Օր»-ը մաքնային տակէն ելնելուն պէս հոն կ'երթայ կոր, խաղապալընն ալ հիւրիս ետևէն, նեպէթով կ'առնեն կ'երթան կոր. աղբար հացի պէս բան մըն ալ սախայ. Ստանպոլ պագի խաս ֆրուններ կ'ըլլան քի անարատ փիշիկն հաց կը հանեն, ամէն իրիկուն ալաթուրքա ծամը 11ը էղաւ մի ատոնց խանութին առջիւ չարըլըն խրճաղըն կը լեցուի, ալ նեպէթ պէքէկէ քիմ, քեզի սըրա գայ, փառան տալ հաց աննկու համար:

Բան չունիս նէ ըսէ քի, անդին պաշխա ֆրուններ ալ կան բերանին բաց ճանն կը քեն, հոն ալ չերթաք պէ ախար:

— Հը, չարըլըն խեղդ է քիմ թագէ բանը կեցած իքէն՝ պայթին բով երթայ. վերջը իր վրան կը խնդան նէ:

Ս. — Պապա հախ ունիս, հախ. ով չուղիք քիմ բան մը ծախու առնէ նէ, թագէ ըլլայ, անարատ ըլլայ:

Հիմա գնա «Նոր-Օր»-ին համար կէս սասթ հոն պէքէկոյններուն հազար ըսէ քի, ճանրմ անդին աւրիշ հայերէն ղաղէթա չի կայ, մէկ քանի հոգնիւր ալ գացէ հոնկէ առէք. ատ խօսքէն խըզմիշ պիլէ կ'ըլլան. «փիշիկն հացը իլէ պայթ չարը ինտոր գիտեն նէ, ղաղէթային ալ փիշիկներ իլէ քեփագէն իրարմէ ֆարս կ'ընէին»:

Պ. — Ամա, մէկալներն ալ մեղք են, թող ապրին:

Ս. — Ժողովուրդը ատանկ բան մտիկ կընէ հի՛շ պապա. ես բարա կուտամ կոր, անոր փոխարէն մէնֆաթ կուզմ կըսէ. էկէր ատանկ գործեր պոյերնուն վեր է, պաճախըղները թող հի՛շ չի մոնան, անկէ

ետքն ալ՝ սուտ ու բուտ լաֆերով, համարը հոտորդ խօսքերով կը սկսին ղաղէթանին լեցնել, հէմ իրենք քեփալէ կըլլան, հէմ ալ միլլէթին պատուոյն կը դպին:

Պ. — Իրաւունք ունիս, իրաւունք:

Ս. — Ի՛հ, հայտէ նայինք, սա գործից համար ինչ ըսաւ պատմէ, ան ալ պէտք է:

Պ. — Ասոր խօսքը կայ, կաղաչեմ ձեռքը թուղթ մը առ, ես ինչ կ'ըսեմ ան գրէ:

Ս. — Հայտէ՛ նայինք (ձեռքը երկայն թուղթի մը կտոր կ'առնէ):

Պ. — Մարդ մը կայ, երկայնահասակ, երեսունը հինգը անցուկ, կ'ընէ սօղոուն, երեսը իրեն պէս բէն չունի, գէմքը արեգակին պէս կ'ըր, աչուրները ճամբ պէս փարաւիշ կ'ըլլան՝ Սուտանցիի պոնտուիներուն պէս. աչուրներուն քիչ մը տրխաթ ըրէ, կարծես քի մէկը սուղալըր գնել տիւշիւնով կ'ըլլայ կոր. մէզէկ աչուր, մեմ լեքէթն իքէն տածիկ եղաւ, բողբոջական եղաւ, ամէն խալթ կերաւ. հարիւր եկէթիշը հինգ ընտանիք միտիւր վրայ նստեցուց, մէկէն ըրչալթ ուտելով, մէկուն ղամազութիւն ընելով, միւսին ալ սօղանսըրմը ը-

նելով. էկէր շիս հաւտար նէ ասոնց համար Մըսըրէն պիլէ հիսապսըզ շահիտ կը բերմ:

Ինտորէ նէ իմիս ալ մէկ գործս ձեռքը ինկաւ. մէմէքէթն իքէն գործս իրեն թեւ լիմ ըրի. ինչ ըսեմ սեպէկ ըլլողին, վեր պապա՛ն պաշայեց, վերին սօնը չեկաւ, մինչև քիմ քանի մը հարիւր լիրա՛ քաշեց. վերջը վերջը փարաս չի մնաց, մաղազաս ծախեցի, ան ալ հատաւ նէ ինծի ինչ ըսէ աղէկ «Իշին միւտտէթի կէմիշ, արթըդ իւմիւտ եօգալը». պապա:

է, Ալահաան պուպսըն, էկէր գործին իմիւտ չի կար նէ ինչու համար ինծի 250 լիրա խարճել տուիր. խարդախ մարդ, միւտ տէթը անցուց, հէմ ինէ փարաս քաշեց հէմ ալ խասմէն ըրչալթ կերաւ. (այս միջոցին Պ. . . ն գէպի վեր նայելով «եա՛ ըկպիմ, սէն պիլիթին պանա եարտըմ իթ, փերիշան օլտըմ, չորուզ չօճուղըմ քեւ իւսթիւն տէ գալտըմ, շու ղալըմըն ճէգասընը սէնտէն տիլէրիմ. . . ռուտ ու ընկիլի թաշիկնակ մը հաննիլով արցունքը սրբեց):

(Շարունակելի)

Համազգային անկեղանոցի պատրաստմանը՝ ճոխ գորգ մը։ Արջիպեղազոսի կուսակալ Աբեղին փաշա նուիրած է Էնկիւրի մէջ ունեցած իր մէկ քէօշկը՝ որ 2300 օսմ ոսկի կ'արժէ՝ արուեստից վարժարանի մը վերածուելու համար։

Բուլղարիոյ և Արևելեան Բուսիանի իսլամները՝ ոսկի և արծաթէ շինուած արևելեան քէօշկ մը։ Քէօշկին իւրաքանչիւր ճակատին վրայ կը բացուի սինազարդ սրահ մը։ Չորս անկիւններէն իւրաքանչիւրին մէկ կը գտնուի կոթողիկ մը, որուն վարի մասին վրայ ոսկեզօծ գրերով գրած են մէկ քանի աղօթքներ։ Ընտիր գմբէթ մը և չորս սիններ ունի այս քէօշկը։ Դուռներուն վերևը քանդակուած է կայսր զինանշանը, համակ ոսկիէ։ Ամբողջ քէօշկին բոլորտիքը կը գտնուին վահաններ, որոնց վրայ գտնուող արաբերէն և թուրքերէն արձանագրութիւնները կը յիշատակեն վեհ, աւլթանին կատարած գլխաւոր գործերը։ Այս քէօշկը հաստատուած է մութ կարմիր մարմարինէ պատուանգանի մը վրայ, որ արձանագրութիւն մը կրէ։ Մէկ խօսքով, սրբանշանի նուէր մըն է այս, որ պատրաստուած է Նէշիւր էֆ. Մէլհամէի նախաձեռնութեամբ։ Նէշիւր էֆ, իր կողմէ 300 օսմ ոսկի նուիրած է ասոր համար, ինչ որ ամբողջ արժէքին մէկ քառորդն ըսել է։

Պ. Ֆրանք Օրուանօ՝ օսմ բանկային Պարիզի ճիւղին տնօրէնը, 16000 ֆր. դաշնակ մը։

Բուլղար էկզարգը՝ 3 կիւր ծանրութեամբ ոսկիէ ախտէ մը։

Շիրքէթի Խայրիէ՝ «Նիւքրան» շոգենաւին մէկ մանրանկարը, որ 1000 ոսկի արժած է։

Թնդանթարանի վերատեսչութիւնը՝ գեղեցիկ ալբոմ մը, որ կը պարունակէ 280 նոր թնդանթներու պատկերները։

Քաղաքապետութիւնը՝ 4000 ոսկի նոց երկու անթներ, կայսր զինանշանով զարդարուած։

Ս. Պատրիարք հայր՝ սուլթան Ահմէտի կոթողին մէկ արծաթեայ մանրանկարը։

Յունաց պատրիարքարանը յայտնի է, թէ 1000 ոսկի յատկացուցած է յունական վարժարաններու մէջ թուրքերէնի մասին առաջին ելլող աշակերտներուն տարուէ տարի բաժնուելու համար։

Հայ հռոմէականաց պատրիարքը՝ կայսր զինանշանները սնդուսի վրայ բանուած։

Բաթալիայի ժողովուրդը՝ Շնորհաւորական ուղերձ մը, զմրուխտով զարդարուած պահարանի մը մէջ ներփակէ

Հէրէքէի կայսր գործարանը՝ 14 մետր երկայնութեամբ և 9 մետր լայնութեամբ սրանչի գորգ մը, երկու ուրիշ պզտիկ գործեր և սէջադէներ զուտ մետաքսէ։

Բասիլ րէյ՝ զուակ Արջիպեղազոսի կուսակալ Աբեղին փաշային, և անդամ մարալին ժողովին, նուիրած է ոսկիէ հինաւորաց մեծարժէք թագ մը։

ՆՈՐ-ԴԱՐ

Le Gérant J. MUNIER

Տպաւ. «Միտ քիւն».— Թ. Ս. Փափագեանի

ԳԱՖԷ ԵՓՐԱՏ

Ապօին Պապ-էլ-Պոսթան Հրապարակին վրայ եւ Նուագածուաց խմբի Ջօրանցի դիմացը
ՕՀԱՆՆԷՍ ՄԻՄՈՆԵԱՆ
ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մէկ հատիկ Ջօրանցի է Գահիրէի մէջ, ուր կենցաղաւոր մը կարենայ անցընել հաճոյալի ժամանց մը։ Ապօինի ընդարձակ հրապարակին զովագին օդը, վայրին սրանչի ղիւրքը, և սպասներուն մաքրութիւնը, այս ամեն առաւելութիւններով ԵՓՐԱՏ ՋԲՕՍԱՐԱՆԸ քիչ ատենուան մէջ յաջողած է ունենալ յաճախորդներու պատկառելի թիւ մը, որոնք ամեն իրիկան, ժամադրութիւն ըրած են, ու ժամերով կը վայելեն երջանիկ ընկերութիւն մը։

Ամեն կարգի զովարար, թարմ ու անխառն ըմպելիներէ զատ մասնաւոր խնամքով կը պատրաստուի ընտիր ընտիր միջոցներէ օչարակ. ամենէն դժուարահաճներն անգամ պիտի գոհ մնան Եփրատէն։

ՃԱՆՈՒՄԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԴԱՋԱՆՃԵԱՆ
Շարա Ապու-Սապահ
Նիեու-Տնիվերսկի իգեղարանին դիմացը.

Օգտատուն ու զուարճալի դիրք մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու մենդարար կերակուրներու զանազանութիւնն, անխաբախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը դիւրամատչելի գիներով ահա՛ Դաջանճեան եղբարց ճաշարանը։

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին։

ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ
Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժանութ գրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եփրատի գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վտահալութիւնը կը վայելէ։

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ զրամական և ֆուէտի Ֆոնսիէի, Վիլ աը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ, Սմասկան չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհետի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխատուած։

Փափաքողները հաճին դիմել Նիւպաուի վրայ փաստարան Ռարթարիի դրասենակը։

Թղթակցութիւն և կամ դրամ զըրկել հետեւալ հասցէին։

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

ՉՈՒԼԻՉ-ՄԵԲԵՆԱԳՈՐԾ
ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐԲ
ՍԱՐԳԻՍԵԱՆ
Ս. ԴԱՐԲԵՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արոյրէ զանազան գործիքներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, ևն., յաճախորդները գոհացնող պայմաններով։

Ա. Չ. Դ.

Ազգային Գալստեան վարժարանի համար Օգնական - Ուսուցչուհի մը պէտք ըլլալով, փափաքողք կրնան դիմել վարժարանս և բանակցել Տնօրինութեան հետ։

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

Գալստեան երկու վարժարանի

ՊԵԼԱՆԱՆ-ԹԻՃՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐԱՎԿԵՐ
ԱՐԱՅ ԵՒ ՏԻԿԱՆՑ
ԵՒ ՉԵԻԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳՊՐՈՑ
Ապօինի մեծ պողոտային վրայ Տախրայի Սանիթի դիմացը, նախկին Ելիսրական գործիներու վաճառատունը։

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ դիմող Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտագնութեան կողմէն։

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեւագիտութեան գասեր ամերիկեան ամենալիւրջին կատարելագործուած մէթոտով, Մանրամանութեանց համար դիմել մեր գործատեղին։

ԱՍԱՄԱՐՈՅԹ Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դասիկոնը։

Կը բժշկէ բերնի և ալուսի ամեն տեսակ հիւանդութիւնները։ Աղքատները ճրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9։

Տ Պ Ա Ր Ա Ն
Մ. Բ. Ա. Թ. Ա. Մ. Ի. Մ.
Ի ԳԱՀԻՐԷ
Ա.ՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ
Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւորներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն.։
Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամով եւ ճաշակաւոր տպագրութեամբ։
ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ

